

Մ Ա Յ Ր Դ Ի Ի Ա Ն

ՄԻԻԹԱՐԵԱՆՑ ՎԵՆԵՏԿԱՌՑ. - Ի Ս. ՂԱԶԱՐ

(Շար. տես Բազմ. 1924, էջ 253)

ՆԸ.

Ինչ որ լսած ու տեսած է նամակագիրը պատերազմական վիճակին շուրջ՝ մանրամասն կերպով կը նկարագրէ նաև հետեւեալ թուղթին մէջ:

Փերյարզեցեցիկոյ Աբրայ Հօրդ մերոյ, տեառն տեառն Մխիթարայ
Աստուածաբանութեան վարդապետի

.... Ի յաշխարհամտարան կիրակէի հետեւեալ ԲՇ.ի գիշերն, զփայտեայ ճաղն պա-
տուհանի եկեղեցւոյն բեկոտեալ և մտեալ զող, բացեալ զտօլապն, յորում պահի սկիհն,
արծաթէ խաչ մի, և թա|ս| մի, նաև բուրվառն, ևս զգեստեղէնք. զոչ ինչ առեալ, փա-
խեալ է. Ի յառաւօտուն տեսեալ մեր զպատուհանն բեկոտեալ, և զտօլապն ի բաց ձգեալ,
և ի տապանակն սրբութեան ոչ հպկեալ, զարմացաք:... ան տաճկին օրըստօրէ՛ զօրա-
նայ, զի այսր քան զբարաքին ի յեզր մօռանայ գետոյն զոն տաճիկք. Ը|ի| ասեն. սոքա
անդ գնազար վեց հարիւր ֆիլ ալիւրն ամբարեալն անդ յափշտակեցին և ուղարկեցին ի
նիշ: Եւ ի գիւղօրէս խարաջ առնուն, ի կողմանէ Վիտիու ևս ԺԼ Ռ տաճիկք ընդ նոսին
նաև ֆրիսթաներ և հրացանք լուաք թէ սոքա մերձեցան օժտովայու, որ գոչօվայ ասի,
երեք ժամաւ հեռի, ունին զգիտութիւն զի զանտառն այն տեղւոյն հատանել տայցեն բնակչաց
տեղւոյն. և զհրացանսն զառիվեր լերանն հանցեն, յորմէ մարտիցեն ընդ գոչօվայու. և
յայլմէ լուաք թէ սոքա, այսինքն քրիստոնեայք, զմին ի տաճակ կալեալ, և զայս դիտումս
նոցին իմացեալ, վասն որոյ ինքեանք գլխաւոր տաճկին առեալ, մարտ եղեալ են. Ի
քրիստոնէից 240 անկեալ, իսկ ի տաճկաց 1000. և փախեալ ասեն, և լուաք թէ զօրք
սոցա Ռ են, ևս Ռ գառտանայ են: Աստ տակաւին ի նոյն կացութեան է ի կողմանէ զօրաց
ասեն զոյ. հրէից մեծիայն դարձաւ: Միայն 500 զինու|ր| ժամանեաց ի գէմին, որ է
սէմէլին, աստի հեռու մի ժամ. նաև չորս նաւն Թ|Ռ|Շէ մանր հրացանք իբրու 4(). ևս
աչօք համարեցի, այսօրիկ թուի թէ ի ցամաքի շրջեցուցանելի են: Ասեն թէ ամենեքեան
զօրքն մինչև ի վերն ամսոյս գալոց և հաւաքելոց են: Բայց ի վերայ այսր ամենայնի
տակաւին չունիմք զապահովութիւն. տաճիկն սոցա անգամ կարի զլրբութիւն ստացաւ,
յաղազս անցելոյ ամի անկարգութեան սոցին, որ զօրծեցաւ: Նաև ափշեցուցանէ զիս թու-
լութիւն սոցին, ոչ գիտեմ արդեօք զգարան ինչ ունին գործելոյ: Եւ կամ թէ մի գուցէ
(զոր Տէր մի արասցէ) թէ ձերմակ լաթն խափեալ իցէ զսա, և դարան ինչ ունի գործել
տալոյ. խաղաղութեան նշան ոչ երևի, զի թշնամիք սոցա ոչ զաղարին ի յայնանէ մինչև
ցայժմ ի փասելոյ:....

Պատրաստական ծառայ

Հայր Մեղապէլ վ. Սեբաստացի

1738 Մայիս 10
12 գիր սոյն թուիս,
Ի Պէլլղատու

ՆԹ.

Յաջորդիւ կ'ամբողջացնէ Հ. Միքայէլ իր նախորդ նամակը:

Գերշադեցեայ Աբրաւ Զօրդ մերում, տեսան տեսան Մխիթարայ
Աստուածարամուրեան վարդապետի

.... յանցելում գրոջ ծանուցի թէ տաճիկք եկեալ են ի վերայ գոչօվայու. զօրք տոցին որ անդ դէմ էլեալ պատերազմեալ են, հազար և երկու հարիւր ի տաճկաց ձգել, յինքեանց չորս հարիւր և մի ճէնրալ, տաճիկքն փախեալ. բայց մինչ ըմբոսեալք են տաճիկքն զլեզու, իմացեալ թէ սակաւ զօրք գոն ի գոչօվայ, բազմացեալ վերստին, զարձեալ այժմ պաշարեալ են զգոչօվայ այն հինգ հարիւր զինու(ո)րքն, որք նոր եկեալ ասացաք յանցելում, ուղարկեալ ասեն զնոսա անդ ի յօգնութիւն. եթէ զգոչօվայ առնուն, ճանապարհն է դմովար, գոչօվայ բանալիքն է նորին. ի մանարստան ի յապականութիւն դնեն, զի ի նոսա ևս ապստամբութիւն բազում գոյ: Այսոքիկ տակաւին տաճկին ցնցուխքն են, եթէ մեծ զօրք զայ գինչ լինիցի ոչ գիտեմ, զի ասեն թէ, որպէս և նոյն քահանայն որ ի ստամպուլու եկն ընդ գօտէրի ֆոռնցեզու, ասաց, Վէզիրն մարայ դուլուքն և ուռու մէլու բուրդ չեկէրոքն ի վերայ սոցա. և թագաւորն անատուլու բուրդ զօրօքն ի վերայ մօս կովին գնալոց են....:

Պատրաստական ծառայ ամենայնի
Հայր Միքայէլ Վ. Սեբաստացի

1738 Մայիսի 17ին
13 Երրորդ գիր թուիս
ի Պէլլըգատու:

Զ.

Կատարեալ ու խղճամիտ օրագրող մ'է Հ. Միքայէլ. այնքան աւելի մանրամասն, բազմազան ու խիտ են անոր հետաքրքրական ու պատմական տեղեկութիւնները՝ որքան մեծ է իր երկիրւն ու կ'ազդուի հասակին տկարութիւնը, որոնք կը մղեն զինքը դէպքերուն դիմաց աշալուրջ հսկել, ինչպէս կը տեսնենք երեք յաջորդ նաւակներուն մէջ:

Գերշադեցեայ Աբրաւ Զօրդ մերոյ, տեսան տեսան Մխիթարայ
Աստուածաբանուրեան վարդապետի

... կասկածն և դողն պատերազմին տակաւին տէ է ի յիս, թէպէտև թուլացաւ սակաւ ինչ, զի սկսան զօրք կայսերն քայլել և գալ այս կողմս. ի մայիսի 16 եկն աստ ֆիրդ մարշալ Վալիսն, հրամայօղն հետեակաց զօրաց. ի 23ին յունցին երկու նաւք զինուորեալք ճական զինուորօք բաց ի մադինարաց, 30ական թօփ քաշօղ, ոմանք ասեն ի գոչօվայ գնան, ոմանք ի մու փալանգան, և ոմանք յայլուր առ ի շինել զկամուրջ վասն անցման զօրաց և լինիլ պահպան նմա: Ի 28ին եկն եհաս մծազոյն մարշալն զինիզէք, որ է խորհրդական պատերազմի, և աստ ջնալոց է: Կայսերն փեսայն փոխչիփէ լութոնն գալոց է, իւր կահն և սպասաւորք եկեալ են աստ և այլ մարշալ գալոց է, ոմանք ասեն թէ փալֆին ևս գալոց է. և ոմանք ասեն ոչ, այսօր տասն հազարի չափ զօրք հետեակ

և հեծեալ ի սեմէլինու և աստի հանդիսապէս անցեալ գնացին ի վայրս վրանաբնակիլ, մինչև ցայժմ թէ աստի թէ գետով թէ ցամաքաւ, և թէ հանդիպական ցամաքան թու- նայի երեսուն հազարի չափ զօրք անցեալ են, բայց թէ ուր կամին գնալ, անյայտ է այժմ, մինչ սպասեն նաև այլոց զօրացն գալ: Ի գոչօվայ եկեալ տաճկացն վասն, յայտնի զրոյց ոչ գոյ թէ ինչ եղեն: Զրոյց գոյ թէ ի մանարատան աստտաժութիւն գոյ, թէպէտ զբազումս կալեալք են: Ոմանք ասեն թէ ի ձմերանս ռազօցին տղայն ի տաճկաստանէ զաղտ և գծուծ ձեռով եկեալ մտեալք ի յունկարիայ, զի զմեծամեծս զըղեցեղ, յորժամ տաճիկ) զօրքն գան, ինքեանք ևս զզուլս բարձին ի վերայ կայսերն, այս իմանեցեալ է, վասն այսորիկ որոնեն և ըմբռնեն զայնպիսիսն, և ռազօցին տղայն փախեալ ասեն վերստին ի տաճկաստան: Աստ վասն նորա զհրաման մի ընթերցան թամպուռով երկու և երեք տեղ, թէ ով ոք որ զհա կենդանի կալցէ և բերցէ, 40 հազար ֆիօրին շնորհեսցի նմա, նաև ազատ լիցի ի հարկաց ինք և ազգ իւր. իսկ եթէ զզուլին բերցէ, 20 հազար: Եւ յայլոց լուաք, թէ զնա թուրքն ուղարկեալ է ի Վիտին կազմել զընտիր զօրս մինչև յիսուն հազար իբրև իւր, երբ զայցեն զօրք տաճկաց, ինքն ևս մտցէ նոյն զօրօքն ի ի մանարատան: Եւ ոմանք ասեն, թէ ի պուքտէշ ուլահու քաղաքն կազմեալ է զզօրս: Հայք որք ի պէլըղատս, ի չորս և հինգ առաջս բաժանեցան, ոմանք վասն ահին փախեան, ոմանք վասն վաճառականութեան աստ և անդ գնացին, ոմանք փէրէքէնտէ անձինք ի թափուռն երթան, մինչև ցայս վայր 26 անձինք ևս մնան: Զորմէ հետէ եկեալ եմ, թուի թէ այսքան ևս ցնաց....:

Գերյարգութեան քում

1788ին. Մայիսի 31ին

Պատրաստական ծառայ

14. Երրորդ գիր ի տոյն թուիս
ի Պէլըղատու

Հայր Միքայէլ Վ. Սեբաստացի

ԶԱ.

Գերյարգեցիկոյ Աբրալ Հօրոյ մերոյ, տեսան տեսան Մխիթարայ
Աստուածաբանութեան վարդապետի

.... թշնամեաց ձնասն և յառաջանալն միշտ երևի, բայց ի սոցանէ ոչ իմն գործ երևեցաւ մինչև ցարդ օգոստակար. ահա զօրքն անցան ի կողմն դմշուվարու, զի այն կողմն օռտովայու երկու և երեք տեղ տաճիկքն տիրապետեալ էին, լիւի չափ. մինչ սոքա անցին այն կողմն, ասեն նոքա փախուստ ետուն, և ոմանք ասեն թէ գտեալ յուրեք պատեւ յազմեալ են, 3(X) ի սոցանէ անկեալ, Գիւ ի նոցանէ: Վերջապէս այն կողմէն ձայն տաճկին մարեցաւ ասեն. բայց այս կողմն յերեկեանն զարդեաւ ասեն լի տաճիկք տասն ժամ հեռու աստի, ի ներքոյ այսր կամին զալ ասեն, և ութսուն հազարով ֆէզդիրն ի Սօֆիայ ժամանեալ, տաճիկքն ինքն որպէս աղուէս և կապիկ, խաղայ և խաղցնէ զսոսա, աստ զօրք ոչ գոն, նաև 2 հազար, զի աստ եղեալն ևս տարին [...] աւուր միոյ ճանապարհ գնացին, կամ ոչ, հարիւր հիւանդացան, բերին աստ: Կայսեր փեսան երկու օր է որ ի վարատինու էանց յայնկոյս գինիզէք գլխաւոր հրամայօղն լ զօրացն էանց... լուայ թէ յիսուն հազար են տաճիկքն, որք մերձ են, նաև լուայ թէ սոքա ևս յայտկոյս քարշէնոց են զգորս իւրեանց, տաճիկքն սոցա հետ տամայ կու խաղայ. այն երկու նաւքն որք գնացին, զրեցի յայլում գիր, գնացեալ պահապան կեցան շինեցեալ կամուրջին, մինչև զօրքն անցան. յոյցին զկամուրջն, նաւքն վերստին դարձան այսր... զայս գիր մինչ

կամէի եզերել, լուայ զթափախից լուր, թէ տաճիկն մերձեցեալ է իբրու կէս աւուր հանաւարս, ահարհ, ահարկութիւն և երկիւղ մի անկաւ ի սիրտս բազմաց, և լուայ թէ զգրուես քաղաքիս փակելոց են...:

Գերայարգութեան քում

Պատրաստական ծառայ ամենայնի
Հայր Միքայէլ Վ. Սեբաստացի

1738 յունիսի 21

15. Երրորդ զիր ի Պէլլըղատու.

ԶԲ.

Գերայարգեցեալ Սարգիս Հօրդ մերոյ տեսան տեսան Միխիրտոյ
Ստուգածարանունքեան վարդապետի

... Հասարակ երեք պատիժն աշխարհիս, այս քաղաքիս վրայ կայ. այսինքն պատերազմ և ահ թշնամեաց, սով և թանկութիւն, և ժանտամահ, որ առաւել կասկածելին որ այժմ այս է, որ եթէ ոք չըշիցի ի քաղաքիս տեսցէ զբազում մեռեալս ի փողոցս և յանկիւնս անկեալ զինն բազում օր. սայլով կրեն ի դուրս, առանց քահանայի, զի չեն բաւական. առաջի դրան եկեղեցւոյն մերոյ վեց օր մեռեալ մի մնացեր էր, մեր ննջեցելոյն հետ զնա ևս թաղեցաք: Զօրք սոցա լսելով թէ խումբ կապեալ քայլէ տաճիկն առ դմչվար, վերստին անցան յայն կողմն, առ ի ընդդէմ ելանել նոցա. բայց լուեալ նոքա փախեան: Ի մօտակայ տեղիս տաճիկքն երևին և շրջալային, մի անգամ ակնիւրն վեց և եօթն ճ տաճիկքն եկին, որ այն ժամ բոլոր զօրք սոցա աստ էին, սակաւ մի ձիաւոր զօրք և զատանայք ուղարկեցին, զատանայքն միայն պատերազմեցան, ութ ինն թուրք անկանոն, և երկու երեք ի սոցանէ. յետոյ ապա թէ տրակոներն սկսան ի մէջ առնուլ, բայց տաճիկն իմացեալ փախեաւ: Այս ամաց պատերազմ սոցա քան զհերոսին աւելի ծաղրական և խարդախական, որ թուրքն այնքան մեծ ուժով և բազմութեամբ չեկաւ, թողին որ զերկիրն մինչև ցայսր ի յապականութիւն դրաւ. և զանառիկ բերրն այնքան թօփերով և այլովք իրովք թոյլ հտուն թշնամւոյն առնուլ, այսինքն զօտսովայ: Այս օրերս լուաք թէ փաշամ մի ճ և այլ աւելի անձամբ եկեալ աստ որպէս հրեշտակ բանակեալ արտաքոյ քաղաքիս, զի ոչ թողին ի ներքս մտանել, բերեալ է զգրիւ և այլ մի զիր ի դումաշ քաակի առ կայսերական ատենն հասանել, այսու հռչակեն զի խաղաղութիւն լինի... և... ճէնրալ վիզարիօն որ զիս քաջալերեալ յորդորեաց մնալ աստ, եթէ տաճիկն առնէ զքաղաքս այս, զափիթօլացիօն ի լինելն քեզ տիրութիւն առնեմ առ ի ազատել. բայց սա մինչ այն սակաւ տաճիկն երևեցաւ և պատերազմեցան ակնիւրն ի քաղաքիս, յերկիւղէն առժամայն նստու ի կառս իւր և փախեան ի Վիլէնա, այժմ աւագ քանոնքն է փոխանորդ....

Գերայարգութեան քում

Պատրաստական ծառայ ամենայնի
Հայր Միքայէլ Վ. Սեբաստացի

1738, հոկտեմբերի 25

ի Պէլլըղատու

Հ. ՂԱԽՈՒՄ ՏԱՅԵԱՆ

Շարունակելի